Ի. ՂԱՐԻԲՅԱՆ. Արծափ-Մեղրաձոր, *Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 2006, 536 էջ:*

Հայաստանի Հանրապետության բնակավայրերին նվիրված գրքերը հարստացավ ևս մեկով՝ հնագետ-պատմաբան, պրոֆեսոր Իգիթ Ղարիբյանի «Արծափ-Մեղրաձոր» կարևոր ու շահեկան աշխատությամբ, որը ի տարբերություն մինչ այժմ հրատարակվածների, առանձնանում է աղբյուրագիտական հարուստ հենքով, հատկապես արխիվային վավերագրերի հմուտ քննությամբ և փաստական նյութի խոր վերլուծությամբ:

Աշխատությունը ներկայացնում է դարերի միջով քայլած արծափ-մեղրաձորցիների պատկառելի անցյալ ունեցող պատմությունը: Այն ընդարձակում է հայոց հնագույն բնակավայրերի մասին թե՛ մեր պատմական հիշողության շրջանակը և թե՛ գիտելիքները: Գիրքը մի տեսակ ձոն է արծափ-մեղրաձորցուն, որը նախանձելի համբերատարությամբ դժվարին ճանապարհ անցնելով, ի վերջո, հանգրվանել է պատմական Թեժառույքում, որն այսօր կրում է Մեղրաձոր անունը:

Ձեռնամուխ լինելով Հայաստանի Հանրապետության չքնաղ բնաշխարհ ունեցող բնակավայրերից մեկի՝ Արծափ-Մեղրաձորի պատմական տարեգրության ստեղծմանը՝ հեղինակը ջանացել է հնարավորության շրջանակներում ընդգրկել հրապարակի վրա եղած ողջ նյութը, հարստացնելով այն արխիվային վավերագրերով: Իր դրույթներն ու եզրահանգումներն առավել համոզիչ և փաստագրված դարձնելու համար Ի. Ղարիբյանը հաճախ դիմում է մատենագրական և վիմագիր արձանագրությունների վկայություններին: Հայաստանի ազգային արխիվում իր անխոնջ որոնումներով հեղինակը կարողացել է գործնականում գիտական շրջանառության մեջ մտցնել Արծափ-Մեղրաձորին առնչվող արխիվային ողջ նյութը, ինչը տրամաբանական ու առարկություն չհարուցող է դարձրել ուսումնասիրողի հետևությունները:

Հեղինակն ընթերցողի ուշադրությունը բևեռում է այն պարզ ճշմարտությանը, թե ինչպես նվաճողները, մասնավորապես՝ բարբարոս թրքախոս ցեղերը միշտ արյունով են շաղախել արծափցու հացը, սակայն նա իր ազգային անկոտրում կամքին հավատարիմ, պատերազմների արհավիրքի, շփոթ կացության, աղետալի տագնապների պայմաններում շարունակել է արարել, արդյունավորել հայրենի սրբազան հողը:

Արծափցիներին Թեժառույքում (որն այլազգիների բերանում աղավաղվելով, ստացել է Թայչարուխ անվանումը) տրամադրում է հաստատվել ու լեռնալանջի հարուստ ու դալարագեղ բնությունը՝ արգասաբեր, թեկուզ և ոչ ընդարձակ մշակովի հողատարածքներով և հարուստ մարգագետիններով: Հայոց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ արծափցին գոյատևելու, նոր կյանք սկսելու փրկարար ափ է տեսել՝ ակնկալելով ռուսական իշխանությունների բարեհաճությունը: Արծափցուն մնում էր հարմարվել ցրտաշունչ ու անսովոր բնակլիմայական պայմաններին, նոր կացությանը, կյանքի կոչել իր ավանդական զբաղմունքները, տնտեսական կյանքի երկու կարևոր՝ երկրագործությունն ու անասնապահությունը, ինչպես նաև արհեստագործության ոլորտները: Ռուսական իշխանությունների կողմից տրված քիչ թե շատ արտոնյալ պայմաններում՝ որոշ ժամանակով ազատված լինելով հարկերից ու տուրքերից, գաղթական արծափցիներն եռանդով ձեռնամուխ են լինում իրենց նոր բնակավայրի բարգավաճմանը:

Աշխատությունը յոթ գլուխներով ներկայացնում է բնակավայրի ամբողջական տարեգրությունը մինչև 1917 թ.: Առաջին՝

«Արծափը մինչև XIX դարի սկիզբը» գլխում (էջ 5–41) հեղինակը Սեբեոսի, Ղևոնդի, Թովմա Արծրունու, Վարդան պատմիչի հաղորդած մատենագրական տվյալների, ինչպես նաև Կլավիխոյի, Ժոբերի և այլազգի այլ ճանապարհորդների նկարագրությունների հիման վրա ընթերցողին է ներկայացնում Արծափի անցյալի մանրակրկիտ պատմությունը:

Աշխատության հաջորդ գլխում՝ «Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմները. Արևմտահայության գաղթը» (էջ 42–122), տրվում են ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների նկարագրությունը, զինաբախումների ավարտին իրականացված արևմտահայության գաղթը, ռուսական զորքին արծափահայության ցուցաբերած մեծ օժանդակությունը: Այդ առումով կարևոր են արխիվային վավերագրերում պահպանված արծափահայ ազատամարտիկ Մանուկ Բանեյանի սխրանքն անմահացնող նոր նյութերը, որոնք հայտնաբերել է Ի. Ղարիբյանը և ընթերցողի ուշադրությանը ներկայացրել, թե ինչպես արծափցի խրոխտ հայորդին, Փավստոս Բուզանդի բառերով իր «բարձր բազկաւ և հզաւր ձեռամբ» նահատակվել է ասիական արյունարբու բռնակալության, շղթայազերծ գայլերի բռնապետության դեմ մղվող պայքարում: Հեղինակն այդ կապակցությամբ վկայակոչում է ժամանակի եկեղեցական և հասարակական-քաղաքական ականավոր գործիչ Ներսես Աշտարակեցու երկու բացառիկ հուզիչ նամակները, որոնցից մեկը հասցեագրված է անձամբ Մանուկ Բանեյանին (էջ 55), իսկ երկրորդը՝ Արծափի ավագներին ու բնակչությանը (էջ 55–56): Դրանք Մանուկ Բանեյանի՝ հարազատ ժողովրդի դժբախտությունները տեսած և սխրանքի դիմած մարդու հերոսությունը վավերացնող Աշտարակեցու խորին երախտագիտության արտահայտությունն են: Հուզիչ են հնչում հեղինակի խոսքերը Բանեյանի սխրանքի մասին. «Արծափի երախտապարտ ժողովրդի ժառանգները երբեք չեն կարող մոռանալ իրենց սրբազան հերոսի անունը» (էջ 56): Ի. Ղարիբյանը՝ անդրադառնալով Թուրքմենչայի և Ադրիանապոլիսի պայմանագրով նախատեսված շուրջ 130000-135000 հայերի՝ Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի որոշ վայրերում հաստատվելուն, փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց է տալիս, որ երբ ռուսական զորքը հեռանում էր իր ազատագրած հայկական տարածքներից, արծափցիները ստիպված էին թողնել իրենց բնօրրանը և գաղթել՝ հաստատվելով ռուսական կառավարությանն անցած տարածքներում: Որոշակի աղբյուրագիտական հետաքրքրություն է ներկայացնում Թայչարուխ (Մեղրաձոր) գաղթածների գերդաստանների ցանկը՝ ըստ բնակավայրի 1831-1836 և 1842 թթ. մարդահամարների կամերալ նկարագրությունները (էջ 84–124):

Անկասկած մեծ հետաքրքրություն է ներկայացնում աշխատության երրորդ գլուխը՝ «Թայչարուխ–Մեղրաձոր բնակավայրի հիմնադրումը, զբաղմունքը, կենցաղը» (էջ 125–168), որն անդրադառնում է բնակավայրի շենացնելուն գաղթած արծափցիներին ու կենցաղին: Հեղինակը բարձր է գնահատում ռուսական կայսրության պաշտոնյա Ի. Շոպենի կողմից 1829-1832 թթ. Հայկական մարզի կամերալ նկարագրության իրականացումը: Նա միաժամանակ ընթերցողին է մատուցում բնակավայր հիմնադրելու, բնակիչների զբաղմունքի ու կենցաղի յուրահատկությունների մասին արժանահավատ և հետաքրքրական նյութեր, որոնք ժրաջանորեն քաղել է արքեպիսկոպոսներ Հովհաննես Շահխաթունյանցի և Մեսրոպ Մմբատյանցի երկերից: Ուշագրավ են նաև Ղևոնդ Ալիշանի, Երվանդ Լալայանի, Լևոն Մելիք-սեթ-Բեկի, Պարույր Մուրադյանի և այլոց աշխատությունների մեջ հրապարակված վիմագիր արձանագրությունները: Կենցաղին ու բարքերին նվիրված գլխում ընթերցողն արժեքավոր տեղեկություն է ստանում մասնավորապես եկեղեցական ժողովրդական տոների, հարսանեկան և այլ արարողությունների մասին (էջ 143–168):

Աշխատության հետաքրքիր բաժիններից է չորրորդ՝ «Վարչական վերափոխումներին, համայնքի ինքնակառավարմանը» նվիրված գլուխը (էջ 169–198): Ու-

շագրավ են Հայաստանի ազգային արխիվից հեղինակի քաղած այն նյութերը, որոնք վերաբերում են 1878-1895 թթ. ինքնակառավարման մարմինների ընտրություններին:

Մեղրաձորի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակին՝ հողաշինարարության խնդիրներին, սակավահող հողաբաժիններին, ցարական, տեղական իշխանությունների անհոգի և կամայական վերաբերմունքի լուսաբանմանն ու ընդվզումների քննությանն է նվիրված աշխատության հինգերորդ գլուխը՝ «Թայչարուխ–- Մեղրաձորի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը» (էջ 199–241):

Չափաբերական մատյաններից տքնությամբ քաղված նյութերն աղբյուրագիտական կարևորություն են ներկայացնում՝ ամփոփված գրքի վեցերորդ՝ «Չափաբերական մատյան. Նոր Բայազետի գավառ, Թայչարուխի Սբ. Աստվածածին եկեղեցի (1861–1879 թթ.)» գլխում (էջ 242–350):

Անտարակույս, արժեքավոր են թե՛ վերջին՝ յոթերորդ գլուխը և թե՛ հավելվածը, որոնք ազգագրագետի, պատմաբանի ուշադրությանն են հանձնում Ղարիբյանների տոհմածառը և Շոպենի՝ Հայկական մարզի Դարաչիչակի մահալի ազգաբնակչության աշխարհագրի նյութերը: Մասնագիտության բերումով՝ հեղինակն ընթերցողին է ներկայացնում Մեղրաձորում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված արժեքավոր հիանալի իրեր՝ մասնավորապես քանդակազարդ սակրը և այլ գտածոներ ու քննության առնում դրանք (էջ 351–371):

Ղարիբյանների տոհմածառի ներկայացումն առավել շատ ունի ճանաչողական նշանակություն, որով հեղինակն իր համերկրացիներին ցույց է տալիս, թե ինչպես պետք է կազմել տոհմածառը, որը կապակցված լինի փաստական նյութերի վրա:

Անկասկած արժեքավոր են գրքի պատկերազարդումները, թեկուզ, ասենք, բրոնզեդարյան ժամանակներին պատկանող հնագիտական նորահայտ նյութերը, մինչ այժմ անհայտ գեղաքանդակ, մեծ հետաքրքրություն ներկայացնող X-XIII դդ. խաչքարերը, որոնք ընդարձակում են խաչքարերի աշխարհագրական քարտեզը կամ կենցաղային առարկաները, որոնք XIX դ. գործեր են:

Ի. Ղարիբյանի այս գիրքը, որն ստեղծվել է վավերագրական աղբյուրների անխոնջ պրպտումների ճանապարհով, բովանդակում է Արծափ-Մեղրաձորի պատմության համակողմանի քննությունը, ինչը, անտարակույս, արժանի է բարձր գնահատանքի և ամենայն դրվատանքի:

Ուսումնասիրության գնահատանքի մեր խոսքն ավարտենք Առաքել Դավրիժեցու բառերով՝ աշխատություն, որ «զարդարեալ ազգի-ազգի յոտով և յամօք, որովք ծիծաղի երկիր եւ մեծաւ ուրախութեամբ ցուցանէ զդեմս իւր»:

ԲԱԲԿԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ